

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջան *Հավասարություն և գերազանցություն*

ԲԴՄՇ Ուսումնական ծառայություն

Առողջության/մասնագիտական դասընթացների հարգելի աշակերտներ և ծնողներ.

Բարի գալուստ «Ուսումնական ծառայություն» նախագիծ: Մա ծագեց այն մտքից, որ կրթությունը ներառնում է ոչ միայն գիտելիքների, այլև խղճի, սոցիալական պատասխանատվության և կարեկցանքի զարգացում: Նախագծի նպատակն է, կամավոր ծառայության միջոցով, պատրաստել աշակերտներին դպրոցից հետո մասնագիտություն ընտրել:

Մեր կարծիքով, ծառայությունը սկսելուն պես, աշակերտներն ուրախ կլինեն տեսնել, որ իրենց նվիրվածության ու ջանքերի շնորհիվ ազդեցություն են գործել ուրիշների կյանքի վրա: Հուսով ենք, որ օգնելով ուրիշների նրանք ձեռք կբերեն ինքնազգացողություն, վստահություն և անձնական պատասխանատվություն, որոնք կկրեն իրենց հետ ողջ կյանքում:

A և C ձևերը պետք է վերադարձնել 9-րդ դասարանի առողջապահության /մասնագիտության ուսուցչին: Աշակերտները կարող են նաև լրացնել պահանջվող 10 ժամից ավելին, եթե ցանկանում են: 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանցիները պետք է վերադարձնեն պահանջվող Ա և Սի ձևերը համալսարանի/մասնագիտության կենտրոնի աշխատակցին: 12-րդ դասարանցիները, ովքեր չեն կատարել պահանջվող 10 ժամը, պետք է վերադարձնեն նշված ձևերը համալսարանի/մասնագիտության կենտրոնի աշխատակցին մինչև 12-րդ դասարանի առաջին կիսամյակի վերջը: Այնուհետև, կենտրոնի աշխատակիցը կգրանցի նրանց կատարած ծառայության ժամերը: **Ցանկանում ենք հիշեցնել, որ ծառայության 10 ժամը դպրոցը ավարտելու պահանջներից մեկն է:**

Մաղթում ենք բոլորին հաջողություն և շնոհակալություն ենք հայտնում այս նախագծում և համայնքում ձեր կողմից ներդրած ուժի և ոգևորության համար: Դուք մեր համայնքի ամենաարժեքավոր ռեսուրսն եք:

Անկեղծորեն,

Շերոն Քուսեռ

Գերատեսչի տեղակալ

Ուսումնական ծրագրեր և քննություններ

Ծրագրի ուղեցույցներ և կանոններ

ԲԴՄՇ Ուսումնական ծառայություն

Ծրագրի նախապատմություն և ձևավորում

Ուսումնական ծառայությունը սկսվել է Բրբենքի Միացյալ Շրջանում 1998-1999 ուսումնական տարվա ընթացքում: Մասնակցությունը պարտադիր է 9-րդ դասարանը առողջության/մասնագիտական դասընթացի համար: Բոլոր աշակերտները պետք է պարտադիր կերպով 10 ժամ լրացնեն մինչև 12-րդ դասարանի առաջին կիսամյակի վերջը, քանի որ այն դպրոցի **ավարտական պահանջներից** մեկն է հանդիսանում: 100 կամ ավելի ժամ ունեցող աշակերտները հատուկ ճանաչում կստանան ավարտական հանդեսի ընթացքում:

Ուսումնական ծառայությունը կամավոր աշխատանք **չէ** շահութաբեր կազմակերպությունների կամ էլ ընտանիքի անդամների համար կամ էլ այլ անձանց համար երեխա խնամել, տուն մաքրել կամ հարևանի բակի խոտը հնձել:

Տերմինների սահմանում

Ուսումնական ծառայությունը պահանջում է աշակերտներին կամավոր աշխատել ուիշներին օգնելու և տարբեր գործերով համայնքին օգուտ տալու համար: Ուսումնական ծառայությունը մշակված է, միջնակարգ դպրոցի միջոցով, դպրոցից – մասնագիտություն կապը ամրապնդելու համար: «Ուսումնական ծառայություն» բառացի նշանակում է կամավոր աշխատանք (առանց վճարվելու), որը ուղիղ կամ անուղղակի կերպով կապված է ուսումնական ծրագրի հետ: Որոշ դեպքերում, կապն այնքան նուրբ է, որ աշակերտը ինքն է եզրակացություն կայացնում: Ծերանոցում կամավոր աշխատող աշակերտը, օրինակի համար, կարող է հիշել այն դասը, որի ընթացքում խոսվել է ընկերակցության վերաբերյալ, կամ հիվանդանոցում կամավոր աշխատող աշակերտը կարող է հիշել գիտության դասի ընթացքում սովորած գիտական տերմինները: Այլ դեպքերում, ուսուցիչը կարող է քաջալերել ուսումնական ծառայությունը, որը ներառում է մի հանձնարարություն կապված որևէ դասի հետ:

Ուսումնական ծառայությունների վայրերի ընտրություն

- Այն աշակերտները, ովքեր, ուսումնական ծառայություն կատարելու համար կրնորեն այնպիսի կազմակերպություններ, որոնք նշված և ընդունված չեն ուսումնական ծառայության ռեսուրսների ցուցակում, պետք է լրացնեն և հանձնեն **ձև B (Form B)**, կամ խոսեն առողջապահության ուսուցչի կամ էլ համալսարանի/մասնագիտական կենտրոնի աշխատակցի հետ՝ թույլտվություն ստանալու համար **մինչև** ծառայությունը սկսելը: **Ձև B-ն** կարելի է ձեռքբերել համալսարանի/մասնագիտական կենտրոնում կամ էլ դպրոցի կայքէջից: Կամավոր աշխատանքի նախապես ընդունված կազմակերպությունները հաճախակիորեն են ավելանում ռեսուրսների թարմացված ցուցակում:
- Քաջալերում ենք աշակերտներին աշխատել ոչ շահութաբեր կազմակերպությունների համար, որոնք հաստատված աշխատավայրեր են կամավոր աշխատանքի ծառայությունը կատարելու համար:
Ընդունելի աշխատանքի օրինակներ *ոչ շահութաբեր* կազմակերպությունների համար.
Ծրարների մեջ թերթիկներ դնելը, դրամահավաք AIDS քայլարշավի համար, երեխաների խնամք եկեղեցի այցելող անձանց համար, ովքեր ներկա են գտնվում եկեղեցում:
Չընդունելի աշխատանքի օրինակներ *ոչ շահութաբեր* կազմակերպությունների համար.
Կրոնական դասընթացի դասավանդում կամ դրամահավաք, որը շահութաբեր է կամավոր աշխատողի համար:
- Շահութաբեր կազմակերպությունների համար կամավոր աշխատող աշակերտները, ընդհանուր առմամբ, **չեն կարող** կերդիտ ստանալ աշխատանքի համար:
Ընդունելի աշխատանքի օրինակներ *շահութաբեր* կազմակերպությունների համար.
Գրասենյակում օգնել նպարեղեն հավաքի ընթացքում գոհարանության տոնի զամբյուղների համար, աշխատել իրավաբանի գրասենյակում, որն աշխատում է չարաշահված կանանց ապաստարանում և կատարում է *անվճար ծառայություն*:
Չընդունելի աշխատանքի օրինակներ *շահութաբեր* կազմակերպությունների համար.
Պատճենահանում, թղթաբանություն կատարել, գրասենյակում պատասխանել հեռախոսազանգերին, խնամել կենդանիներին շահութաբեր խանութում:

Ծրագրի կանոնները

- Աշակերտները պետք է **ճնողի թույլտվություն (Form A)** ներկայացնեն ծառայությունը սկսելուց առաջ:
- Ամենաշատը 8 ժամ (կրեդիտի համար) կարող է կատարվել մեկ օրվա ընթացքում:

- Աշակերտները պետք է **գրառեն կատարած ժամերը (Form C)**:
- Կրեդիտը տրվում է միայն աշխատավայրի ղեկավարի և ԲԴՄՇ-ի ծրագրի կազմակերպչի կողմից:

Գրառումների պահպանում

- Համալսարանի/մասնագիտական կենտրոնի աշխատակիցը կգրանցի աշխատած ժամերը ԲԴՄՇ-ի գրառումների պահպանման համակարգում:
- 9-րդ դասարանի առողջության ուսուիցչը կհավաքի լրացված **Forms B և C-ն** և կհանձնի համալսարանի/մասնագիտական կենտրոնին մայիս ամսվա ընթացքում, որը կպահվի մինչև դպրոցի ավարտելը:
- 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանցիները պետք է հանձնեն այդ ձևերը համալսարանի/մասնագիտական կենտրոնի աշխատակիցին, որոնք կպահվեն մինչև դպրոցն ավարտելը:

Պարգևատրումներ

- 100 և ավելի ժամ կամավոր աշխատանք կատարած 12-րդ դասարանցիները ուսումնական ծառայության ճանաչում կստանան (սկզբնական աշխատանքի 10 ժամը նույնպես կգրանցվի 100 ժամի հետ): Բոլոր պարգևները պետք է ստանալ մինչև ավարտելը:
- Համալսարանի/մասնագիտական կենտրոնի աշխատակիցները կվերահսկեն 10 պահանջվող ժամից ավելի աշխատած ժամերը:
- 100 և ավելի ժամի համար ճանաչում ստանալու համար, աշխատած ժամերը պետք է հանձնել կենտրոնին մինչև **12-րդ դասարանի ապրիլ ամսվա 3-րդ շաբաթվա վերջը: Այս ամսաթվից հետո կատարված ժամերի համար կրեդիտ ստանալ չեք կարող:**

Դպրոցի ծառայությունների ակումբներ

- Աշակերտներին թույլատրվում է հանձնել ուսումնական ծառայության այն ժամերը, որոնք կամավոր աշխատել են դպրոցի ծառայողական ակումբների համար: Այն պետք է հանձնել համալսարանի/մասնագիտական կենտրոնի աշխատակցին:

Լրիվ 10 ժամվա պահանջի լրացման ժամկետը

Պահանջվող 10 ժամը ապացուցող փաստաթղթերը պետք է հանձնել համալսարանի/մասնագիտական կենտրոնին **մինչև 12-րդ դասարանի առաջին կիսամյակի վերջը**: Ժամերը ժամկետից ուշ հանձնող աշակերտները ստիպված կլինեն ժամանակին բողոք ներկայացնել: Առաջնորդության գրասենյակը (Guidance Office) կարող է օգնել ձեզ ծանոթանալ բողոքարկման ժամկետների, ձևերի և տեղեկատվության հետ:

Ուսումնական ծառայություն Ռեսուրսների ընթացիկ ցուցակ

Կենդանիներ

GLAZA Լուս Անջելեսի գազանանոց – (ամենաքիչը 16 տ.) *հյուրընկալել www.lazoo.org* 323-644-4200
Ahead With Horses, Inc. 818-767-6373
Horses in the Hood & Thumbs Up Riding ակումբ– Ջեյն Շա 818-899-40

Բրբենքի քաղաքապետարանի Կամավորների ծրագիր 818-238-5249

(դիմումագրերը վերցնել համալսարանի և մասնագիտության կենտրոնում կամ www.burbank.ca.gov/bvp)

Տղաների և աղջիկների ակումբի համացանցային սրճարան
Բրբենքի կենտրոնական գրադարան
Բրբենքի Բուենա Վիստա գրադարան
Բրբենքի Հյուսիսարևմտյան գրադարան
Food Forward – տեղերը տարբեր են կախված աշխատանքից
Մերի Ստոիկա սրճարան Ջոսլին մեծահասակների կենտրոն
Բրբենքի Վարդերի Շրքերթի կազմակերպություն

Մանկական կազմակերպություններ

Երիտասարդ կույրերի հիմնադրամ – Դեբբի 323-295-4555
Friends at Play (աշխատել հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ) – Թերեզա Մակի 818-968-5195
Kidspace թանգարան – (պահանջվում է ամենաքիչը 30 ժամ) 626-449-9144
Նշում. Բրբենքի բոլոր դպրոցները – դիմել համալսարանի/մասնագիտական կենտրոնին

Բրբենք քաղաք

Բրբենքի վերամշակման կենտրոն (Recycle Center) – (ամենաքիչը 20 ժամ) 818-238-3900
Սան Ֆերնանդո Հովտի Աղջիկ սկաուտների խորհուրդ – Սուզան Տրավիս 818-886-1801
Ջոսլին մեծահասակների կենտրոն – Դի Քալլ (ամենաքիչը 50 ժամ) 818-238-5370

Համայնքային կազմակերպություններ

Բրեյլ կենտրոն – (ամենաքիչը 15 տարեկան և ամենաքիչը 20 ժամ աշխատանք) 323-663-1111
Բրբենքի քաղաքացիական հպարտության կոմիտե – Սինդա Քեյջ 818-238-5840
Բրբենքի համակարգող կոմիտե – Ժանետ Դիել (ccholidaybaskets@aol.com) 818-216-9377
Բրբենքի Վարդերի շքերթի կազմակերպություն – Ռոբերտ Հատտ (մեքենա) 818-840-0060
Բրբենքի մարդկային հարաբերությունների կոմիտե – Մայք Չապման - thebhrc@gmail.com 818-860-2472
Կալիֆոռնիայի գիտական կենտրոն (ամենաքիչը 16 տ. 3 ամիս շաբաթական 4 ժամ) – կամավորների վարիչ 213-724-3623
Բրբենքի Խաբաթ – Ռաբբի Շմուլի Կորֆելդ 818-954-0070
Ոսկյա Նահանգ մարմնամարզություն (աշխատել անկարող երեխաների հետ) – 818-558-1177
Վելվետ Ֆիլիպս Velvet Philipps
Hathaway Sycamores – Ստեֆանի Բարիերո 323-257-9600, ext. 7224
Երեխաների համայնքային ատամնաբուժարան – Դեյլ Գորման 818-841-8010
Նոր Հորիզոն ընտանեկան կենտրոն 818-545-9848
ONEgeneration (18255 Victory Blvd., Reseda 91335) – Դեյնա Հաբեր 818-705-2345
Rising Star երաժշտական թատրոն (թատրոնի բոլոր մասերը) – Բեթ Մյուրեր 818-749-8051
Սան Վալլի պետական գրադարան – (ՏԵ քննություն է հարկավոր) Անն Ջենսեն 818-764-1338
Teenline (teenlineonline.org հավելյալ տեղեկության համար) — Ջեննի Փեսկալ 310-423-1603
Վիկտորի-Վայլանդ հանգստի կենտրոն – Քրեյգ Էդմանն կամ Անթոնի 818-985-9516

Ապաքինման տներ, հիվանդանոցներ/առողջապահություն

Բեվերլի Մանոր Օլգայմր խնամք – Մարիա Գոնսալես 818-843-1771
Բեվերլի Մանոր առողջապահական կենտրոն – Նորա Լեգասայի 818-843-2330
Պրովիդենս/Սուրբ Էլիզաբեթ խնամքի կենտրոն – Մարիա Մարտինես 818-980-3872
Միդար Սայնայի բժշկական կենտրոն – Ալիսոն Ռատտր (միայն ամուսնու) 310-423-8044

Faith & Hope խնամքի կենտրոն – Տիֆանի Արուս Աջարյան 818-559-1460
 Գլենդելի Մեմորիալ հիվանդանոց – (ամենաքիչը 15 տարեկան) 818-502-2373
 Հովտի խնամքի կենտրոնի հրեշտակներ – Ջոն Ստիլի (շաբաթական գոնե 1 818-542-3070
 ժամ)
 Կապույտ Դոյակ թոշակառուների հյուրանոց – Քալլին 818-843-3141
 Պրովիդենս/Մուրբ Ժոզեֆ բժշկական կենտրոն (*ամենաքիչը 15 տարեկան,* 818-847-3501
100 ժամ և ավելի + համազգեստ) – Լինդա Գուալ
 Վիլյա Սկալաբրինի – Ռիկարդո Ալա 818-768-650

Սովորաբար/անտնություն

Բրբենքի ժամանակավոր օգնության կենտրոն (BTAC) – Էդուարդ Ստեյվիլտոն (գոնե 15տ.) 818-848-2822
 Կրնդունենք ամենաշուտ եկող 2 աշակերտ, ով կզա երկուշաբթիից մինչև ուրբաթ ժամը 1:30-ից հետո
 Լոս Անջելեսի սննդի շրջանային բանկ – Անա Մարտինես 323-234-3030, ext.144
 Food Forward- 7412 Fulton Ave. #3 North Hollywood, CA 91605 818-764-1022
 Կայքէջ. www.foodforward.org

Թանգարաններ և բնություն

Travel Town (Գրիֆից այգու գնացքի գիղ և ուղու նորոգում) –Նանսի Գնիք 323-668-0104
 կամ www.traveltown.org արձանագրվել որպես կամավոր
 Tree People – Քիթ ՍքԱլեր (Շաբաթօրյա համայնքային միջոցառումներ) 818-623-4879
 ԱՄՆ-ի անտառային ծառայություն – Գերրի Ռիփենոն 818-899-1900, ext.228

Դպրոցից դուրս ծառայության ակումբներ

Բրբենքի լավատեսների ակումբ – Ջանեթ Դիել 818-843-3699
 Տոստիլի Սիվիտան – Սենդի Շապիրո 818-846-1480

Կամավոր ռեսուրսներ դպրոցում

BHS 818-558-4700 JBHS 818-558-4777

Հայկական ակումբ — օրիորդ Չաբերյան BHS
 Key ակումբ – BHS- պարոն Քոլլագոս, JBHS- պարոն Ֆերնանդո
CSF – BHS – օրիորդ Վու/պարոն ՍքՆիֆֆ, **JBHS** - օրիորդ Սեյլմ և պարոն Հեդին
 HOPE (Օգնել ուրիշների սնվել) – BHS, տիկին Չակերյան/տիկին Մինասյան
 National Honor Society – JBHS – օրիորդ Սեյլմ, BHS – օրիորդ Քոսթաբ
 Teen Court — JBHS – օրիորդ Վիլյամս, պարոն Բուլինգտոն, տիկին Քարման, օրիորդ Գրեն
 Օնոդական կենտրոն (ELAC) BHS (թարգմանիչ է հարկավոր) Ջենա Ստուարտ, ELD կազմակերպիչ
 PTA – կապնվել դպրոցների հետ

***Նշում.** Դպրոցի այլ ակումբներ նույնպես կարող են մասնակցել: Խոսել ակումբի վարիչի հետ:*

Կամավոր ռեսուրսներ դպրոցից դուրս

Երեխաների ֆուտբոլի ամերիկյան ակումբ (AYSO) – Մաթթ Քոփփին 818-841-2976
 BCR – Մարիա Դի Լիբերտ (հաշմանդամ երեխաների և մեծերի զարգացման ծրագիր) 818-843-4907
 Տղաների և աղջիկների Բրբենքի ակումբ – Թոնի Գոնսալես 818-842-9333
 Տղա սկաուտների ամերիկյան ակումբ – Քրիստինա 818-243-6282, x117
 Բրբենքի ընտանեկան YMCA – Մաթթ Մարտինես, matt@burbankymca.org 818-562-5461
 Ընտանի կենդանիների հիմնադրամի ընկերներ – Դայեն Մոնոհան 818-767-5919
 Pacific American Volunteer Association (PAVA) – Irving Chung 213-252-8290
 Փրկության բանակ – Քրիստինա Մեստա (ամենաքիչը 14 տարեկան) 818-845-7214
 Մաչաո որբատան հիմնադրամ – Քասսի Վուդզ 818-840-9484
 Սան Ֆերնանդո հովտի կամավորների կենտրոն – Ռաբել (ամենաքիչը 20 ժամ 818-908-5146
 Մարդկության անիվներ – Դեյվիդ Հերնանդես 818-255-0100x231

***Նշում.** Եկեղեցիների կամ կրոնական բոլոր վայրերում ծառայություն կատարելու համար , լրացնել ձև B և հանձնել առողջության/մասնագիտության ուսուցչին և/կամ համալսարանի/մասնագիտական կենտրոնին՝ թույլտվություն ստանալու համար:*

Կազմակերպություններ/հիմնադրամներ

Սկզբից հիմնություն (նախկինում՝ հաշմանդամ երեխաների հասարակ.) 626-449-5661
 Քաղցկեղի ամերիկյան կազմակերպություն – Անա Ռոմերո 818-905-7766
 Քաղցկեղի ամերիկյան կազմակերպության, խանութ – Ջոսեֆ Գուիդո 818-841-2969

Մրտի ամերիկյան կազմակերպություն – Անժելա	213-202-5058
Կարմիր Խաչի ամերիկյան երիտասարդական ծրագիր – Ռան Ֆարինա կամ Այոհնա Էֆրեմյան	818-243-3121
Բրբենքի արվեստի և կրթության կազմակերպություն – Պեգգի Ֆլինն	818-729-4446
Զատիկի կնիքներ արտադասարանական հանգստի ծրագիր – Ռենե Գուեվարա, վարիչ	818-548-4677
March of Dimes – Եվա Լու	213-637-5046
Բազմակի սկլերոզի ազգային կազմակերպություն – Թիֆանի Ջորդան	310-479-4456
Ուղեղային կաթվածի միացյալ հիմնադրամ – Մերի Ստիվենսոն	818-782-2211, x503

Note: Any site selection requiring more than 10 hours of volunteering may be completed after the freshman year. If you do not see an organization that interests you from the above choices, you may find your own organization or agency, complete and turn in **Form B** to your Health/Careers teacher and/or the College/Career Center for pre-approval. (Revised 3-24-2011)

Ձև A

Ծնողի թույլտվություն ԲԴՄՇ ուսումնական ծառայություն (Այս ձևը առկա է հայոց լեզվով և իսպաներենով:)

Բոլոր աշակերտները պետք է լրացնեն այս ձևը մինչև ծառայության սկսելը:

Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանի *Ուսումնական ծառայությունը* պահանջում է միջնակարգ դպրոցի բոլոր աշակերտներին կամավոր 10 ժամ աշխատել՝ օգնելով ուրիշներին, համայնքին ծառայություն մատուցելով, որը դպրոցը ավարտելու պահանջներից է: 10 ժամ աշխատանքը պահանջվում է կատարել 9-րդ դասարանում: Եթե որևէ պատճառով, այդ 10 ժամը չի լրացվել 9-րդ դասարանում, ապա այն պետք է լրացվի մինչև 12-րդ դասարանի առաջին կիսամյակի վերջը:

Ծնող/պահապան

Իմ որդուն/դստերը թույլտվություն տալով մասնակցել Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանի Ուսումնական ծառայության նախագծին, ես հսկանում և համաձայն եմ հետևյալին.

- Ծրագիրը կարող է պահանջել, որ երեխան աշխատի դպրոցից դուրս այլ վայրում, դպրոցից դուրս կազմակերպություններում: Դպրոցից դուրս լինելը պարտադիր չէ ուսումնական ծառայության նախագծին մասնակցելու համար:
- Եթե երեխան պետք է դպրոցից դուրս աշխատի, ապա տրանսպորտով ապահովելը աշակերտի և ծնողի պատրականությունն է:
- Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանը պատասխանատու չէ ուսումնական ծառայություն ընթացքում պատահած պատահարների կամ դրա ճանապարհին պատահած պատահարների համար:
- Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանը պատասխանատու չէ որևէ վնասվածքի կամ դժբախտ պատահարների համար, որոնք պատահել են աշակերտի ուսումնական ծառայության ընթացքում:
- Դպրոցի աշխատակազմը չի կարող գտնվել այդ վայրում և հսկել աշակերտներին ուսումնական ծառայության ընթացքում:
- Ուսումնական ծառայություն բոլոր ժամերը պետք է կատարել դասերից հետո:

Ես հանդիսանում եմ ներքոհիշյալ աշակերտի ծնողը կամ օրիանական պահապանը, և տալիս եմ նրան իմ թույլտվությունը մասնակցել Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանի Ուսումնական ծառայության հաստատված կազմակերպությունում:

Ծնողի/պահապանի ստորագրություն _____ ամսաթիվ _____

Ծնողի/պահապանի անուն _____

Աշակերտ

Որպես, Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանի Ուսումնական ծառայության ծրագրի մասնակից, ես հասկանում եմ, որ համայնքում եղած ժամանակ, իմ վարքն արտացոլում է իմ դպրոցը: Ես խոստանում եմ ենթարկվել դպրոցական շրջանի կանոններին և հպարտ պահել իմ դպրոցի անունը, որպես Բրբենքի դպրոցի ներկայացուցիչ:

Աշակերտի ստորագրություն _____ դպրոց _____

աշակերտի անուն _____ աշակերտի I.D. _____
առողջության/մասնագիտական ուսուցչի կամ ուս. ծառայության վարիչ _____

_____ Պահանջվող ձևերի ցուցակ ԲԴՄՇ Ուսումնական ծառայություն

Բոլոր ձևերը պետք է ձեռքբերել և վերադարձնել աշակերտի առողջության/մասնագիտական կենտրոնի ուսուցչին: Այն աշակերտները, ովքեր ցանկանում են ուսումնական ծառայության ժամերի կրեդիտ ստանալ այն կամավոր աշխատանքի համար, որը կատարել են որպես որևէ ակումբի անդամ, չեն ազատվում այս ձևը լրացնելուց:

Ձև A-ն և C -ն պահանջվում է ԲՈՒՈՐ աշակերտներից, ձև B-ն պետք է լրացնել միայն այն դեպքում, եթե պահանջում եք ծառայությունը կատարել ցուցակում չնշված կազմակերպությունում:

_____ *Ծնողի թույլտվության ձև —Ձև A*

- Պետք է հանձնել բոլոր աշակերտների կողմից մինչև ծառայությունը սկսելը:

_____ *Չհաստատված կազմակերպության ձև —Ձև B*

- Օգտվել միայն այն դեպքում- եթե ծառայությունը պետք է կատարել համայնքի ծառայության ռեսուրսների ցուցակից **դուրս** գտնվող կազմակերպությունում:
- Կազմակերպության ղեկավարը պետք է լրացնի այս ձևը:
- Ծառայության կենտրոնի ղեկավարը պետք է հաստատի *յուրաքանչյուր* ձև:
- Ոչ մի կազմակերպություն չի կարող ավելացվել համայնքի ծառայություն ռեսուրսների ցուցակում, առանց ծառայության կենտրոնի ղեկավարի թույլտվության:

Գնահատում և ծառայություն ժամերի գրանցում —Ձև C

(Պետք է լրացվի բոլոր աշակերտների կողմից մինչև վերջնական օրը:)

- Կամավոր աշխատած ժամերի գրանցում